ՀԱՏԿԱՑՈՒՑՉԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հատկացուցիչը առարկան ստացական հարաբերությամբ բնութագրող գոյականական անդամի լրացումն է, որը խոսքի մեջ հանդես է գալիս անմիատարր կրկնությամբ՝ պայմանավորված մի կողմից՝ հատկացյալների տարբեր շարահյուսական կիրառությամբ, մյուս կողմից՝ միևնույն նախադասության մեջ նրա թե՛ համասեռ և թե՛ անհամասեռ անդամների լրացնելու հանգամանքով: Եվ այս ամենի հաշվառումով հատկացուցչի կրկնությունն իրացնող շարահյուսական կառույցները բաժանվում են երկու խմբի՝ ա/ միևնույն լրացյալի կրկնվող հատկացուցչով և բ/ տարբեր լրացյալների կրկնյալ և կրկնորդ հատկացուցիչներով նախադասություններ: Այժմ հատկացուցչի կրկնության այս երկու ձևերի մասին առանձին-առանձին:

Հատկացուցիչն ավելի սակավադեպ է կրկնվում միևնույն լրացյալի ազդեցության դաշտում, և այս կրկնությամբ ընդգծվում է ստացականության իմաստը՝ տվյալ առարկային պատկանելու, վերաբերելու նշանակությունը: Նախադասության ոչ բոլոր անդամներն են հակված ստանալու կրկնվող հատկացուցիչ լրացում: Կրկնվող հատկացուցիչը լրացնում է՝

ա/ *ավելի հաճախ անվանական ստորոգյալի ստորոգելիին:* այս դեպքում՝ 1/ կրկնյալ և կրկնորդ հատկացուցիչները երկու կողմից շրջապատում են ստորոգյալին, ընդ որում՝ հետադաս կամ կրկնորդ հատկացուցչին (հատկացուցիչներին) ուղեկցում են սահմանափակման նշանակությամբ վերաբերականներ. ինչպես՝ «... Նրա համար ծայնը *իր* ծայնն էր, *միայն իր*, հատկապես *իր*...» /ՄԳՁՄ, 447/, 2/ կրկնյալ և կրկնորդ հատկացուցիչները ընկնում են հանգույցի և ստորոգելիի միջև. ինչպես՝ «Նրանք կան և *մնալու են Թիֆլիսի* և հին *Թիֆլիսի* մեծ ու հարազատ *զավակները*» ՀԹԸԵ, 445/:

բ/ ուղիղ խնդրին. այս դեպքում շեշտվում է երկու առարկաների միջև գործառվող պատկանելության կամ վերաբերության առարկայական հարաբերությունը: Կրկնյալ և կրկնորդ հատկացուցիչները, որպես կանոն, միջարկվում են որևէ լրացմամբ, մասնավորապես կրկնորդ հատկացուցչի որոշիչով և շարադասվում են իրենց լրացյալ ուղիղ խնդրից առաջ կամ հետո. ինչպես՝ «Ու ես լույսն եմ վառում իմ սենյակի, Միացնում եմ նաև երգասփյուռն էլ իսկույն, Որ... տառերը սերտեմ նոր մի *սիրո, Օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր սիրո*...» /ՊՍ, 2, 171/: Այստեղ կրկնված *սիրո* հատկացուցչի հատկացյալը *տառերը* ուղիղ խնդիրն է:

գ/ *հատկացուցչին.* չնայած հայերենում հատկացուցչի հատկացուցիչ լրացման գոյությունը տարածված երևույթ է, այնուհանդերձ *հատկացուցիչ+հատկացուցիչ* կապակցության առաջին անդամի կրկնությունը հայերենին շատ բնորոշ չէ: Հատկացուցիչ լրացյալով հատկացուցիչը կրկնվում է միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է դրսևորել լրացում հատկացուցչի ցույց տված անձի տարբեր հատկանիշները: Իսկ այս հատկանիշները արտահայտվում են

տարբեր որոշիչներով, որոնց հետ հատկացուցիչը, առանձին-առանձին կրկնվելով, կազմում է *որոշիչ+հատկացուցիչ* բազմակի կապակցությունները, որոնց երկրորդ անդամը՝ հատկացուցիչը, միևնույն լրացական հարաբերությամբ ստորադասվում է ընդհանուր գերադաս անդամին՝ հատկացուցչին. օրինակ՝ «Ինչպե՞ս է, որ մինչև հիմա չի ավերվել *մշեցի Կռպեի, քարագլխեցի Կռպեի, քեռի Կռպեի* ծիծաղի բունը» /ՄԳՁՄ, 105/: Այստեղ *Կռպեի* հատկացուցչի 3-անգամյա գործածությունը պայմանավորված է նրա երեք որոշիչների /*մշեցի, քարագլխեցի, քեռի*/ ընդգծված վկայակոչմամբ:

Ծանոթություն: Կրկնության հիմքի վրա է ձևավորվում միևնույն բառի հոգնակի և եզակի ձևերի առդրությամբ հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունը, որն արտահայտում է գերադրություն, իր հատկանիշով հատկացյալի գերազանցելը հատկացուցչին. ինչպես՝ *լավերի լավը* /«ամենալավը»/, *քաջերի քաջը* /«ամենաքաջը»/, *ոճիրների ոճիր* /«ծանրագույն ոճիր»/, *աստղերի աստղը* /«ամենափայլուն աստղը»/ և այլն: Նույն ձևով նաև՝ *արքայից արքա, քաջերից քաջը, լավերից լավը* և այլն: Օրինակ՝ «Սա հասցրել է *աստղերի աստղին, արեգակների արեգակին*» /ՀԹԵԺ, 3, 28/: Նման կապակցությունները ավելի շատ ընկալվում են որպես որոշիչ-որոշյալի կապակցություններ:

Հատկացուցչի կրկնության մյուս ձևը միևնույն նախադասության բազմակի կամ համասեռ անդամներին լրացնելու դերով հանդես գալն է, երբ այս անդամներն ունենում են նույն հատկացուցիչ լրացումը: Հատկացուցչի նման կրկնությունն իրացվում է պարզ և բարդ նախադասություններում՝ նայած լրացյալի շարահյուսական կիրառությանը. ստորոգելիներին լրացնելը գործում է բարդ, իսկ մյուս անդամներին լրացնելը՝ թե պարզ և թե՝ բարդ նախադասությունների մեջ: Եվ այսպես նախադասության համասեռ անդամներին լրացնող հատկացուցիչը կրկնվում է, երբ լրացնում է՝

ա/ բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների ենթականերին՝ «Եվ արդեն մի տեսակ անհասցե էր *հազրոյի երազը*, և անբուն էր *հազրոյի կարոտը*» /ՄԳՁՄ, 309/:

բ/ միակազմ բարդ համադասական նախադասության անվանական ստորոգյալների ստորոգելիներին՝ «*Ջրերի ողբ է, ջրերի ճիչ է*, ժայռը զնգում է իբրև զանգակ...» /ՎԴԱՄ, 25/:

գ/ անվանական անդեմ միակազմ բարդ համադասական նախադասության գերադաս անդամներին՝ «*Իմ հանճարեղ, իմ հիմար, Իմ պղտոր, իմ ջինջ*, Բահի զնգոց, խոփի վար, Ամեն, ամեն ինչ...» /ՀՍՍԲ, 149/:

դ/ հատկացուցիչներին՝ «Կուլտուրան ստեղծվում է համայն ժողովրդի ստեղծագործ ուժերի լարումով, ամբողջ *ժողովրդի հոգու* եռքով ու հրահրումով» /ՎՏ, 2, 301/: Այստեղ *ժողովրդի ուժերի* և *ժողովրդի հոգու* կապակցություններն ունեն տարբեր լրացյալ, ավելի կոնկրետ՝ *ուժերի* և *հոգու* հատկացուցիչ լրացյալներն ունեն իրենց առանձին լրացյալները՝ հանձին *լարումով* և *եռքով* ու *հրահրումով* ներգործման խնդիրների: Երբեմն էլ նման կառույցում կրկնյալ և կրկնորդ հատկացուցիչներն ունենում են ընդհանուր կամ միավորյալ լրացյալ. օրինակ՝ «Արունն ելավ, ծով-ծով գնաց *Մեր մերերուն, մեր հերերուն, Մեր քույրերուն*, ախպերներուն» /ԱԻ, 2, 119/: Սա ժողովրդախոսակցական ոճ է, որտեղ տեղ է գտել արևմտահայ բարբառներին և ընդհան-

բապես արևմտահայերենին բնորոշ սեռական հոլովի հոդառությունը՝ որոշիչ հոդ ստանալը: Բերված օրինակում ընդգծված *հատկացուցիչ + հատկացուցիչ* կապակցություններն ունեն ընդհանուր լրացյալ՝ արունն (արյունը) ենթական:

ե/ բազմակի ուղիղ խնդիրներին՝ «Պարզ հասկանալ *մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունը* ու *մեր* պատմական *հիշատակարանները*» /ՀԹԸԵ, 460/:

զ/ բազմակի հանգման խնդիրներին՝ «*Ձեռներին Ձեր* մարմարյա, Ոսկեցոլք *Ձեր աչքերին* - ես գերի եմ հնօրյա» /ԿՏԲ, 277/:

է/ բազմակի պարագաներին՝ «Ինձ տարեք *մեր դաշտերը* պայծառ, *Մեր սարերն* անառիկ, վեհանիստ, *Մեր արտերն* արևոտ ու հանգիստ» /ԿՏ, 2, 65/:

ը/ կրկնվող կոչականի կրկնյալ և կրկնորդ ձևերին՝ արտահայտված հարիմաստ բառերով, որոնք մատնացույց են անում նույն նշանակյալը. ինչպես՝ «Ողջունում եմ քեզ խնդությամբ եվ ո՛չ թե դառը ցավով, *Իմ* վերջի՜ն, վերջի՜ն *այգաբաց, Իմ* էպիքական *առավոտ*...» /ԵՉՊԲ, 388/:

Ինչպես նշեցինք, շարահյուսական միևնույն կառույցում հատկացուցիչը կրկնվում է՝ լրացնելով նաև նախադասության տարբեր անդամների: Սա արդեն հատկացուցչի կրկնությունն է անհամասեռ անդամների հետ, որը հետևանք է նախադասության մեջ տարբեր անդամների նույն հատկացուցիչ լրացումը ստանալու, որը երևան է գալիս ավելի շատ բարդ համադասական նախադասության մեջ: Կրկնվող հատկացուցիչը լրացնում է հատկապես հետևյալ անհամասեռ անդամներին.

ա/ ստորոգելիին և ենթակային՝ «Ես *քո լույսն* էի, *Քո լուսաբացը*, Բայց ո՞վ էր, ի՞նչ էր *Քո որոնածը*» /ՀՍՔԵ, 48/:

բ/ ենթակային և կողմնակի ուղիղ խնդրին՝ «*Նրա գրքերն* այրված էին. *Նրա անունը* տվողին սպառնում էր բանտ ու աքսոր...» /ՍԳ, թիվ 1, 1988, 131/:

գ/ ենթակային և հանգման խնդրին՝ «Եվ տեսնում էինք մենք բլուրից, Թե ոնց *գորքերը մեր* փոքրաթիվ Ահա անցնում են կայարանից Եվ մոտենում են *մեր ճակատին*» /ԵՉՊԲ, 408/:

դ/ ենթակային և անջատման խնդրին՝ «Իմացե՞լ ենք, սակայն, Որ *խոսքը, շեշտը մեր* յուրաքանչյուր, Բաժանվելով *մտքից մեր, մեր խոհերից* - Դառնում է ո՛չ թե լոկ դատարկ հնչյուն...» /ԵՉՊԲ, 382/:

ե/ բազմակի ենթականերին և տեղի պարագային՝ «Մի ազնվություն կա *ժպիտում Ձեր* այդ խոր, Քնքուշ են, գգվող են, մեղմող օրոր - *Ձեր ձայնը, Ձեր ձայնը, նայվածքը Ձեր*...» /ԿՏ, 2, 50/:

զ/ միջոցի խնդրին և տեղի, ձևի պարագաներին՝ «Հրովարտակը *յուր* ոսկյա *նկարներով* դեռ փայլում էր *յուր բարձրության վրա*, բերողի ճակատին կապած» /ՐՍ, 240/ և այլն:

է/ բազմակի ուղիղ խնդիրներին և տեղի պարագային՝ «Տուր ինձ քո *ոգին, քո միտքը* ներհուն, Առ ինձ հանճարեղ *քո տարերքի մեջ*...» /ՀՍՍԲ, 4/:

ը/ բացահայտչին ու բացահայտյալին՝ «Եվ *ուժը, ուժը մեր* նոր ծագող՝ *Մեր հորձանուտը* կյանքում հորդած՝ Նրան թվում էր մութ մի հորդա...» /ԵՉՊԲ, 162/:

Երբեմն էլ միևնույն նախադասության մեջ համասեռ և անհամասեռ հատկացյալների հետ համատեղվում են միևնույն հատկացուցչի գործածու-

թյունները. ինչպես՝ «Այնպես բարակ են *Ձեր մատները*, Տիկին, Այնպես քնքուշ են *Ձեր ծեռները* նեղ, Եվ ինչ խաղաղ է նայում *Ձեր հոգին Ձեր աչքերից* այդ մաքուր ու անմեղ» /ԿՏ, 2, 50/: Այստեղ *մատները, ծեռները* և *հոգին* ենթակա հատկացյալներն իրար հետ համասեռ են, իսկ աչքերից տեղի պարագա հատկացյալի հետ՝ անհամասեռ:

Արդի հայերենին բնորոշ օրինաչափություններից մեկը՝ հատկացյալի մեջ հատկացուցչի ներառումը, բնորոշ է նաև կրկնվող հատկացուցչին: Ստացական հատկացյալը կրկնվում է՝ ա/ համասեռ, բ/ անհամասեռ, գ/ համասեռ ու անհամասեռ անդամներին միաժամանակ լրացնելիս. օրինակ՝ «Գնամ Գյազբելիս հողմերը շնչեմ, Գնամ հովերը շնչեմ *Գյազբելիս*... Ու թևերի տակ ննջեմ *Գյազբելիս*» /ՀՍՍԲ, 32/: Այստեղ իմ Գյազբելի բառակապակցության ամփոփումը հանդիսացող Գյազբելիս ստացական հատկացյալը լրացնում է *հողմերը, հովերը* ուղիղ խնդիրներին և *թևերի տակ* տեղի պարագային: Ինչպես տեսնում ենք, ստացական հատկացյալի կրկնությունը պատկանելության իմաստը շատ ավելի ընդգծված արտահայտելու նպատակ է հետապնդում:

Հատկացուցիչը կրկնվում է նաև խոսք կազմող ինքնուրույն նախադասություններում՝ դառնալով դրանց իմաստային ու քերականական կապի դրսևորման միջոց: Այս պարագայում բնական է դառնում հատկացուցչի՝ անհամասեռ լրացյալներին առդրվելը. ինչպես՝ «Ես *ձեր գիրկն* եմ եկել, ժայռեր, կրկին *Ձեր* հին *գերդաստանն* եմ Վերադարձել: Թողեք հանգչեմ ես *ձեր* Հոգնած *կրծքին* Եվ համբուրեմ քրտնած *ճակատը ձեր*» /ՀՍՔԵ, 129/: Այս ինքնուրույն նախադասությունների կապակցության մեջ անհամասեռությունը գործառվում է *գիրկը, գերդաստանը, կրծքին* տեղի պարագաների և *ճակատը* ուղիղ խնդրի՝ իբրև միևնույն *ձեր* հատկացուցչի լրացյալների միջև:

Չափածո խոսքում հատկացուցչի կրկնությունը դառնում է հիմնական իմաստի և հուզարտահայտչականության կրողը, նպաստում է խոսքի կշռույթային ու չափական ներդաշնակության ապահովմանը: Այս դեպքում հատկացուցչի կրկնությունը ոչ այնքան քերականական, որքան ոճական իրողություն է, ունի ընդգծված ոճական արժեք, հանդես է գալիս որպես լեզվաարտահայտչամիջոց՝ կազմելով հարակրկնություն, վերջույթ, հանգույց և այլ բանադարձումներ: Հատկացուցիչ *հարակրկնությունը* հատկորոշվում է բանաստեղծական խոսքի հարևան տողերի սկզբում միևնույն հատկացուցչի նպատակային կրկնությամբ, երբ հեղինակը ցանկանում է շեշտել նույն ստացականության կամ պատկանելության վերաբերելը տարբեր առարկաների: Եվ քանի որ այս իմաստն առավել խոր արտահայտվում է անձնական դերանվան սեռական հոլովում, ուստի հատկացուցիչ հարակրկնություն կազմում է ավելի շատ այս քերականական ձևը: Երբեմն ամբողջ բանաստեղծական տունը կառուցվում է դերանուն հատկացուցչի հարակրկնությամբ. ինչպես՝

«*Քո* քաղցր վիշտը, սիրտ իմ մենավոր,
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,
Քո սերն է վառված և պայծառ և խոր,
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում» /ԿՏԲ, 113/:

Երբ հատկացուցչի հետ կրկնվում է նաև հատկացյալը, հարակրկնություն է կազմում հատկացուցիչ+հատկացյալ կապակցությունը, և այս դեպքում հավասարապես ընդգծվում է նաև հատկացյալը. ինչպես՝

«*Քո ժպիտն* եմ ես տեսնում արևի հոգում,
Քո ժպիտը վարդագույն - իրիկվա միգում» /ԵՉՊԲ, 262/:

Երբեմն էլ հարակրկնության շարք է կազմում հատկացուցիչ+հատկացուցիչ հատկացյալ կապակցությունը՝ առդրվելով տարբեր լրացյալների.

«*Մեր դրախտի* դաշտերն էնտեղ՝
մեր դրախտի ծովի ափին,
մեր դրախտի քաջ տերն էնտեղ՝
բարձր բերդի ձորի ափին...» /ՌԴՊՎ, 348/:

Հատկացուցիչ հարակրկնության շարքը շատ հաճախ պայմանավորում է հատկացյալների նշանակյալ առարկաների համասեռ, ներդաշնակ թվարկումը, որը փակվում է պարբերության սկզբի նախադասության եզրափակիչ կրկնությամբ: Այսպես՝

«*Գարուն էր*. Ամառ եկավ,
Ձագ հանեց ձորում կաքավ,
Իսկ հայը զրկվեց ձագից,
Իր պոռթկան թոնրի տաքից,
Իր մորից, հորից, յարից,
Իր բնից ու աշխարհից.
- *Գարուն ա,* ձուն ա արել...» /ՊՍ, 4, 185/:

Հատկացուցիչ *վերջույթը* բանաստեղծության կից տողերի վերջում միևնույն հատկացուցչի կրկնությունն է, որը հիմնականում հանդես է գալիս չափածո բարդ համադասական կապակցության մեջ, երբ նույն հատկացուցիչ լրացում են ունենում համասեռ տարբեր գոյականական անդամներ, և հաղորդման նպատակներից մեկը կրկնված հատկացուցիչները կշռույթով ու հնչերանգային բազմերանգությամբ ընդգծելն է, մանավանդ երբ դրանց նախադասվում են հարանուն հատկացյալներն իրենց հանգավորմամբ. ինչպես՝

«Միտքն է հիմա *սերն աշխարհի*,
Աշխարհակալ *տերն աշխարհի*,
Բեռնակիրն ու *բեռն աշխարհի*
Եվ *աշխարհի* ճանապարհը» /ՀՍՍԲ, 116/:

Այստեղ *աշխարհի* կրկնորդ հատկացուցիչը, վերջին անգամ տողամեջ փոխադրվելով, փակել է վերջույթի շարքը: Երբեմն էլ հատկացուցիչ վերջույթի միջադաս կրկնորդն է արտահայտվում տողամիջում՝ կապելով կրկնության շարքի նախադաս ու վերջադաս անդամներն իրար. ինչպես՝

«Գնում էիր, գնու՜մ, գնու՜մ,
Չէիր տեսնում ոտքերիդ տակ
Խարակներն ու խութը *աշխարհի*,
Դեռ չէր բախվել քո բախտի հետ
Այս *աշխարհի* արատը մեծ,
Սուտն *աշխարհի*» /ՀՍՔԵ, 114/:

Հանգույցը չափածո շարահյուսական կառույցում հարակրկնության և վերջույթի համատեղումն է, ընդ որում՝ հանգույցի երկու բևեռներն ունենում են

շարահյուսական տարբեր կիրառություններ: Առանձնապես տարածված է հանգույցի հարակրկնության եզրում հատկացուցչի կրկնությունը: Այսպես, օրինակ, Շիրազն իր «Մայրս» ծավալուն բանաստեղծությունը, որ 26 տողից բաղկացած մի բարդ համադասական կապակցություն է, ամբողջովին կառուցել է *մեր* հատկացուցչի նույնասկիզբային և *մայրս* ենթակայի վերջույթային արվեստավոր կրկնությամբ, որի արդյունքում ստացվել է բանաստեղծական խոսքի մի հրաշակերտ քանդակ, մոր կերպարը բնութագրող, նրա որակական հատկանիշները մատնանշող մի գործ: Այս բանաստեղծությունն իր հարակրկնության ու վերջույթի և ներքին հանգավորման հրաշալի զուգորդմամբ շիրազյան խոսքարվեստի բարձր նվաճումներից մեկն է:

«*Մեր* հույսի *դուռն է մայրս,*
Մեր տան մա*տուռն է մայրս,*
Մեր օրո*րոցն է մայրս,*
Մեր տան ամ*րոցն է մայրս,*
Մեր հերն ու մ*երն է մայրս,*
Մեր ճորտն ու տ*երն է մայրս,*
Մեր տան ան*շուքն է մայրս,*
Մեր վեհա*շուքն է մայրս,*
Մեր տան անտ*ունն է մայրս,*
Մեր արծվաբ*ույնն է մայրս,*
Մեր տան ծառ*ան է մայրս,*
Մեր տան արք*ան է մայրս...*» /ՀՇՀՄ, 27-28/:

Հատկացուցիչը մասնակցում է կրկնաբերական նաև այլ բանադարձումների ձևավորմանը: Այսպիսով, հատկացուցչի կրկնությունն արդի հայերենում գործուն երևույթ է և ունի ավելի շատ ոճական նշանակություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.2, Երևան, 1974:
ԵՉՊԲ - Եղ. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984:
ՀԹԵԺ - Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.3, Երևան, 1943:
ՀԹԸԵ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978:
ՀՇՀՄ - Հովհ. Շիրազ, Հուշարձան մայրիկիս, Երևան, 1980:
ՀՍՍԲ - Հ. Սահյան, Սեզամ, բացվիր, Երևան, 1972:
ՀՍՔԵ - Հ. Սահյան, Քարափների երգը, Երևան, 1968:
ՄԳՄ - Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1977:
ՄԳՉՄ - Մ. Գալշոյան, Չորի Միրոն, Երևան, 1983:
ՊՍ - Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. հ. 2, 4, Երևան, 1972-1974:
ՌԴՊՎ - Ռ. Դավոյան, Պղնձե վարդ, Երևան, 1983:
ՍԳ - «Սովետական գրականություն» /ամսագիր/:
ՎԴԱՄ - Վ. Դավթյան, Անկեզ մորենի, Երևան, 1972:
ՎՏ - Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ.2, Երևան, 1961:
ՎՏԲ - Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1985:
ՐՍ - Ռաֆֆի, Սամվել, Երևան, 1956: